

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ԵՐԵՎԱՆԻ, 23 ՀՈՒՆԻՍԻ 2019Թ.  
№ 15 (505)

**Փոխվել են դերերն ու  
փեղերը,  
Բայց նույնն է երախը  
վիշապի...  
Սրանք են այս երկրի  
փեղերը,  
Աղոթեմ, որ մահս շփապի...**

Համո Սահյան

## Վենետիկի հանձ- նաժողովի դիրքո- րոշումը...

Հանձնաժողովը փաստել է՝

1. «Նախկին նախագահ Ռ. Քոչարյա-  
նին անձնական երաշխավորությամբ ազատ  
արձակելու դատարանի որոշումից հետո  
վարչապետ Փաշինյանը կոշտ քննադատու-  
թյան ենթարկեց դատարաններին, ԿՈՉ ԱՐԵՑ  
իր կողմնակիցներին՝ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼ դատա-  
րանների մուտքերը, ինչպես նաև խոսեց  
դատական իշխանության նորացման մասին:  
Հանձնաժողովի նախագահը (Բուքիբիոն)  
վարչապետին ուղղված իր նամակում, թեև  
ընդունեց, որ կա անվստահություն դատա-  
րանների նկատմամբ, սակայն ՊՆԴԵՑ, որ բո-  
լոր ձեռնարկված միջոցները պետք է իրակա-  
նացվեն Սահմանադրությանը և միջազգային  
չափանիշներին համապատասխան»:

1.1. Հայաստանի իշխանությունների հրա-  
վերով ՀՀ է ժամանել եւս բարձրաստիճան  
պատվիրակություն՝ քննարկելու դատաիրա-  
վական բարեփոխումները:

«ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ և ձեռք բերվել, որ բո-  
լոր պաշտոնավարող դատավորների ընդհա-  
նուր ՎԵՌԻՆԳՈՆ ոչ անհրաժեշտ, ոչ էլ օգտա-  
կար կլինի: Փոխարենը, պետք է ամրապնդվեն  
կարգապահական ընթացակարգերը և  
ստեղծվի կապ եկամտունների հայտարարազր-  
ման համակարգի հետ»:

Այսպիսով Վենետիկի հանձնաժողովի  
կարծիքով արգելափակման կոչը եւ դրան  
հետևած միջոցառումները չեն համարվել  
սահմանադրությանն ու միջազգային ստան-  
դարտներին համապատասխան, ակնհայտ  
շարադրված է քաղաքական պատճառն այդ  
վարքագծի, դե իսկ վեթինգն էլ, մեղմ ասած,  
համադարձան չէ, անհրաժեշտ չէ, օգտակար  
չէ, ուստի իշխանությունները համաձայնվել են  
այդ մտքից հրաժարվել, ինչն, իհարկե, խիստ  
խրախուսելի է:

2. Հանձնաժողովի մյուս կարևոր շեշտա-  
դրումը Սահմանադրական դատարանի շուրջ  
ստեղծված թցուկին է վերաբերում:

Հանձնաժողովը տեղեկացվել է Վահե Գրի-  
գորյանի մեկնաբանություններին եւ արդյուն-  
քում շեշտել հետևյալը.

«Վերանայված սահմանադրության 213  
հոդվածը, այդուհանդերձ, ՀՍՀՄԿ եւ ԱՆԵՐԿԲԱ  
սահմանում է, որ մինչև սահմանադրական  
փոփոխություններն ուժի մեջ մտնելը նշանակ-  
ված ՍԴ նախագահը եւ անդամները պետք է  
ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԴԱՇՏՈՆԱՎԱՐԵԼ մինչև 2005  
թվականի սահմանադրությամբ նշված իրենց  
լիազորությունների ժամկետի ավարտը:

Անհանգստացնող է, որ դատավորի այս  
հայտարարությունը ողջունվել է խորհրդա-  
րանի կողմից եւ կա գործող դատավորների  
մանդատների նկատմամբ միջամտության  
վտանգ»:

Այստեղ եւս ամեն ինչ հստակ է:  
Ավելորդ գունազարդ մեկնաբանություննե-  
րի կարիք չկա՝ ՍԴ դատավոր եւ անդամ տա-  
րանջատումը մտացածին է:

Հանձնաժողովը լիազորել է հանձնաժողո-  
վի նախագահ Չ. Բուքիբիոյին հետևել այս  
հարցի շուրջ զարգացումներին եւ ըստ անհ-  
րաժեշտության հանդես գալ հրապարակային  
հատարարությամբ:

yerkirmedia.am



## Սոչի եղցու բակո՛ւմ է թաղված Պապմահայր Խորենացին

Արդեն հայտարարել ենք, որ «Սյունյաց  
երկիրը» պատրաստվում է թողարկել նախա-  
դեպը չունեցող համար՝ «Ուխտագնացություն  
Սյունիք», որի էջերում արտացոլված կլինեն  
Սյունիքի մարզի սրբավայրերը:

Համարի նախապատրաստական աշխա-  
տանքների նոր փուլի մեկնարկը տրվեց հուլի-  
սի 14-ին՝ դարերի խորքից եկող եւ անմատչելի  
ժայռի վրա կանգուն մնացած սրբավայր-տա-  
ճարից՝ Սոչի եղցուց, որի բակում էլ, ըստ ժո-  
ղովրդական հիշողության, հողին է հանձնվել  
Քերթողահայր Սովսես Խորենացին:

Սոչի եղցին գտնվում է Տեղ գյուղից մոտ 3,5

կմ հարավ-արեւելք:

Սոչի եղցու հյուսիսային կողմում Վանու  
ջրաղացի կամ Վանքի ջրաղացի ձորն է, իսկ  
հարավ-արեւելյան մասում Կիրածորն է (Գրա-  
ծորը):

Գրածորի քարայրերից մեկը նույնպես ուխ-  
տավայր է, որտեղ դարեր շարունակ մեր նախ-  
նիները մոտ են վառել, մատաղ արել, հիվանդ  
երեխաներին հենց այդտեղ են բերել բուժելու  
հույսով:

Ծավալով փոքր Սոչի եղցու վրա գիր չկա,  
ոճից երեւում է, որ շատ հին է, տեղացիները  
սերնդեսերունդ պատմել են, թե դա կառուցել է

Սովսես Խորենացին՝ իբրեւ ճգնարան:

Եկեղեցու քարը սպիտակավուն է՝ տաշած,  
բայց մաշված:

Բակում բազմաթիվ տապանաքարեր կան,  
որոնց վրա գրվածքի հետքեր չկան:

Սոչի եղցուց արեւմուտք է գտնվում Կորնի-  
ծոր գյուղը, որի մոտ էլ գտնվում է Խորեան-  
հորիտոր-հորով կոչվող գյուղատեղին, որտեղ,  
ըստ պատմագիտության մեջ իշխող վարկած-  
ներից մեկի (Գնել վարդապետ Գալենքե-  
րյան, Ստ. Մալխայանց, Մորուս Հարսթյան),  
ծնվել է Տիեզերահռչակ վարդապետ Խորենա-  
ցին: **էջ 6**

## Սյունիքի մարզում կոռուպցիոն քրեական գործերով 2019թ. առա- ջին կիսամյակում 83%-ով ավելացել են դատի փրված, 30%-ով՝ դատավճ- ռով մեղավոր ճանաչված անձինք

2019 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ  
Սյունիքի մարզի դատախազության դատա-  
խազների դատավարական հսկողության  
կամ ղեկավարման ներքո ՀՀ քննչական կո-  
միտեի Սյունիքի մարզային քննչական վար-  
չության եւ ենթակա ստորաբաժանումների  
վարույթում գտնվել է նույն ժամանակա-  
հատվածում հարուցված կոռուպցիոն բնույ-  
թի 18 քրեական գործ: Հատկանշական է, որ  
դրանցից 11-ը կամ 61 տոկոսը հարուցվել է  
ֆիզիկական կամ իրավաբանական անձանց  
հաղորդումների հիման վրա, 7-ը կամ 39  
տոկոսը՝ հետաքննության մարմնի, քննիչի,  
դատախազի, դատարանի, դատավորի կող-  
մից՝ իրենց լիազորություններն իրականաց-

նելու արդյունքում: Այս տվյալները փաստում  
են, որ Սյունիքի մարզի բնակչությունը շարու-  
նակում է ակտիվ նախաձեռնողականություն  
ցուցաբերել կոռուպցիոն հանցագործու-  
թյունների բացահայտման հարցում:

Հայտնաբերված կոռուպցիոն դեպքերից  
11-ն արձանագրվել է տեղական ինքնակա-  
ռավարման եւ պետական կառավարման,  
4-ը՝ սոցիալական ապահովության եւ 1-ա-  
կան՝ կրթության, անտառների պահպանու-  
թյան եւ ջրօգտագործման ոլորտներում:

Նույն ժամանակահատվածում քրեա-  
կան հետապնդման մարմինների վարույթում  
քննվել են կոռուպցիոն բնույթի 38 քրեական  
գործեր՝ նախորդ տարվա նույն



էջ 2

# «Գեոպրոմայնինգ» ընկերության նախագահ Ռոման Խուդոլիչը շնորհավորեց կոլեկտիվին՝ մասնագիտական տրոհի առթիվ



**Չորսերկուցյան ընկերություն**

Շնորհավորում են Ձեզ՝ հանրագործի և մետալուրգի մասնագիտական տրոհի առթիվ:

Այս տոնը միշտ եղել է մնում է հպարտանալու առիթ բոլոր նրանց համար, ովքեր ներգրավված են այս դժվարին և խիզախ մասնագիտության մեջ: Սա համարձակ է վճռական մարդկանց տոնն է, ովքեր նվիրված են իրենց գործին: Մենք, Ձեզ հետ միասին, անցել ենք դժվար ուղի և դիմակայել բոլոր ճգնաժամային մարտահրավերներին: Մենք հպարտանալու իրավունք ունենք:

Մարդկային ներուժը գլխավոր ռեսուրսն է ժամանակակից աշխարհում: Հենց մարդկային գործունե է հաղթանակ բերում 21-րդ դարի մրցակցային պայքարում: Այսօր լեռնահանքային արդյունաբերությունը շատ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, բյուջեի համարման կարեւոր բնագավառներից մեկն է՝ հանդիսանալով երկրի տնտեսության հիմքը: Բնագավառն աշխատանքով ապահովում է հազարավոր մարդկանց և պետական բյուջե՝ հարկերի մուտքի հիմնական

աղբյուրներից մեկն է:

Այսօր լեռնահանքային արդյունաբերության բնագավառն արձագանքում է աշխարհի զարգացման դինամիկային և հարմարվում ժամանակի պահանջներին:

Մեզ հարկավոր է աշխատել ավելի արդյունավետ, ավելի բարձր արտադրողականությամբ: Միայն կոլեկտիվի համախմբումը հնարավորություն կտա մեր ձեռնարկություններին շարունակել մնալ մրցունակ, պահպանել առաջատար դիրքերը, ապահովել բարձր և կայուն աշխատավարձեր և ավանդական սոցիալական պատասխանատվություն կրել հասարակության առջև:

Արդեն երկրորդ մասնագիտական տոնն է, որ ես տոնում են Ձեզ հետ միասին: Ինձ համար մեծ պատիվ է լինել մասնագետների մեծ կոլեկտիվի մի մասնիկը, ովքեր լավ գիտեն իրենց գործը և հավատարիմ են ընտրած մասնագիտությանը:

Ձեր ամենօրյա դժվարին գործի համար, դիմելով Ձեզ շնորհակալության խոսքով, ցանկանում եմ, որ յուրաքանչյուր նոր օր լինի հաղթանակներով և ձեռքբերումներով լեցուն, որոնցով էլ հյուսվում են հաջողությունը և վստահությունը՝ ապագայի հանդեպ:

Ձեզ և Ձեր ընտանիքներին մաղթում եմ բարեկեցություն, կայունություն, առողջություն, սեր և հաջողություններ:

**Ռ.Գ.**

**«Գեոպրոմայնինգ» հանքարդյունաբերող ընկերությունների դիվերսիֆիկացված միջազգային խումբը հուլիսի 19-20-ը Հայաստանի քաղաքներում կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ նվիրված հանրագործի և մետալուրգի օրվան: Տոնական միջոցառումներին իր մասնակցությունն է ունեցել «Գեոպրոմայնինգ» ընկերության նախագահ Ռոման Խուդոլիչը:**

# Դավիթ Թովմասյանի ուղերձը հանրագործի և մետալուրգի օրվա կապակցությամբ



**Չորսերկուցյան ընկերություն**

Հանրագործի և մետալուրգի օրվա առթիվ շնորհավորում եմ բոլորիդ, ուղրտի աշխատակիցներին, մասնագետներին և լեռնագործի ուղիով անցած վետերաններին:

Տասնամյակներ շարունակ հանքարդյունաբերությունը մեր երկրի տնտեսական զարգացման կարևորագույն ճյուղերից է եղել: Լինելով հնագույն մասնագիտություններից մեկը, այն մինչ օրս պատվաբեր ու շնորհակալ աշխատանք է համարվում:

## Պատվարժան լեռնագործներ,

Դուք դժվարին առաքելություն եք իրականացնում, որը քրտնաջան աշխատանք է պահանջում, յուրաքանչյուրիդ ամենօրյա նվիրումի շնորհիվ է զարգանում ձեռնարկությունը, մեր հայրենիքը, բարեկեցիկ ապագա կերտվում

մեր երեխաների համար:

Ձեր աշխատանքի զննատեսական ամեն մի կառուցվող մանկապարտեզի, դպրոցի, կարիքավորին օգնելու հնարավորության մեջ է: Մասնագիտական այս օրը ես մեկ առիթ է մեր երախտիքի խոսքը հղելու ձեռնարկության բոլոր աշխատակիցներին:

Շնորհակալ ենք ձեր նվիրված ու ջանասեր աշխատանքի համար: Մեկ անգամ ես շնորհավորում եմ, մաղթում ամուր առողջություն, ձեռքբերումներ և կանքի ուժ՝ միասին զարգացնելու երկրի տնտեսության համար կարեւորագույն այս ճյուղը:

## Հարգանքով՝ Դավիթ Թովմասյան

«Չ ա ա ր ա տ - Կ ա - պ ա ն» ՓԲ գլխավոր տնօրեն

# Կապանի համայնքապետարան - «Չաարատ-Կապան» համագործակցությունը խորանում է



Գեղանուշի միջնակարգ դպրոցում կգործի նաև նախակրթարան: Այդ նպատակով հատկացվել են կրթօջախի մասնաշենքի երկու սենյակ և կից սանհանգույցը: Իսկ մինչ այդ կկատարվեն շիննորոգման աշխատանքներ, որ կիրականացնի «Էդ-Սյուն» ՍՊ ընկերությունը (տնօրեն՝ Արմենակ Սիմոնյան):

Հուլիսի 10-ին կրթօջախ էին այցելել Կապանի համայնքապետ Գեորգ

դպրոցի տնօրեն Գայանե Գրիգորյանը (պատվիրատու), «Էդ-Սյուն» ընկերության տնօրեն Արմենակ Սիմոնյանը (կատարող), իսկ շինաշխատանքների իրականացումը կֆինանսավորի «Չաարատ - Կապան» ընկերությունը (տնօրեն՝ Դավիթ Թովմասյան):

Նախատեսվում է դպրոցի բակում կառուցել «կանաչ» դասասենյակ, որտեղ կանցկացվեն բացօթյա պարաօլիմպիկներ, որի ֆինանսավորումը դարձյալ «Չաարատ - Կապան» ընկերությանն է:

Ընկերության տնօրեն Դավիթ Թովմասյանը ներկայացրեց տեղեկացրեց, որ ձեռնարկության սոցիալական քաղաքականության մեջ մեծ տեղ են հատկացրել մատաղ սերնդի դաստիարակությանը և կրթությանը միտված ծրագրերին:

**Վահրամ Օրբելյան**

# Սյունիքի մարզում կոռուպցիոն քրեական գործերով 2019թ. առաջին կիսամյակում 83%-ով ավելացել են դատի տրված, 30%-ով՝ դատավճռով մեղավոր ճանաչված անձինք

**էջ 1** ժամանակահատվածի 31-ի փոխարեն: Նշված 38 գործերով քրեական հետապնդման է ենթարկվել 21 անձ, այդ թվում՝ Սյունիքի մարզի մի շարք համայնքների /Վերիշեն, Օխտար, Ներքին Խնձորեսկ, Մեղրի/ ղեկավարներ, «Կապանի կոնունալ ծառայություն» ՀՈԱ կազմակերպության տնօրեն, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության ծառայող, Սիսիանի, Մեղրիի և Գորիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության մասնագետներ, «Հայփոստ» ՓԲ ընկերության աշխատակից և այլն:

Առավել շոշափելի արդյունքներ են արձանագրվել քրեական պատասխանատվության ապահովման, մեղադրական դատավճիռների կայացման առումով: Մասնավորապես, եթե նախորդ տարվա առաջին կիսամյակում դատարան է ուղարկվել կոռուպցիոն բնույթի 5 գործ՝ 6 անձի վերաբերյալ, ապա 2019թ. նույն ընթացքում՝ 7 քրեական գործ (40 տոկոսով ավելի)՝ 11 անձի (83.3 տոկոսով ավելի) վերաբերյալ: Ընդ որում՝ եթե 2018թ. նշված ժամանակահատվածում նույն ընթացքում դատարանում բնմկել և մեղադրական դատավճռով ավարտվել են նշված բնույթի 3 քրեական գործ՝ 10 անձի վերաբերյալ, ապա այս տարվա առաջին վեց ամիսներին՝ 9 գործ (3 անգամ ավելի)՝ 13 անձի (30 տոկոսով ավելի) վերաբերյալ:

2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցա-

գործությունների վերաբերյալ դեպքերով ավարտված նյութերով և քրեական գործերով պետությանը պատճառված վնասը կազմել է 7.8 մլն ՀՀ դրամ, որից արդեն իսկ վերականգնվել է 2.411.250 ՀՀ դրամը: Նշենք, որ 2018 թվականի առաջին կիսամյակում հարուցված քրեական գործերով բացահայտված պետությանը պատճառված վնասը կազմել է 6.8 մլն ՀՀ դրամ, որից այդ ընթացքում վերականգնվել է 1.8 մլն ՀՀ դրամը:

Նշված կոռուպցիոն բնույթի քրեական գործերով հանցանքի կատարմանը նպաստող հանցանքների վերացման նպատակով Սյունիքի մարզի դատախազի կողմից ՀՀ Սյունիքի մարզպետին ներկայացվել է 2 միջնորդագիր:

Միջնորդագրերից մեկում բարձրացված հարցերը բնագործի վերաբերյալ մարզպետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների և մարզպետարանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետերի մասնակցությամբ, վերջիններիս ուշադրությունն է հրավիրվել արձանագրված խախտումների և քաղաքացիների հետ հարաբերություններում աշխատակիցների անբույստրեղի վարքագծի վրա և խստագույն պահանջ ներկայացվել հետագայում այդպիսի վարքագիծը բացառելու համար, իսկ մյուս միջնորդագրի բնագործում ընթացքի մեջ է:

**ՀՀ դատախազության հանրային կապերի բաժին**

# Մեկնարկել են Տաթևի խաչմերուկից դեպի Սիսիան ճանապարհահատվածի միջին նորոգման աշխատանքները



Ճանապարհահատվածում իրականացվող աշխատանքներին հետևում է «Հայավտոճան» ՊՈԱԿ-ի պատասխանատու ներկայացուցիչը:

Վերոնշյալ ճանապարհահատվածի միջին նորոգման աշխատանքների շրջանակներում կատարվում են փոսերի նորոգման, հարթեցման եւ նոր շերտի ասֆալտբետոնե ծածկի տեղադրման աշխատանքներ:

Անվտանգ եթեկություն ապահովելու նպատակով նշված ճանապարհահատվածը կահավորվել է համապատասխան ճանապարհային նշաններով:

Պատճառով անհարմարության համար հայցում ենք վարորդների ներողամտությունը եւ հորդորում պահպանել երթևեկության կանոնները:

mtad.am

Աշխատանքներն իրականացվում են «Ոսմար» ՍՊ ընկերության կողմից՝ Մ2 Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 219+800 կմ 228 հատվածում (Տաթևի խաչմերուկից դեպի Սիսիան ճանապարհահատված):

«Հայավտոճան» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի պաշտոնակատար Գոռ Ավետիսյանի հանձնարարականով՝ նշված

# Նարեկ Ամբարյանի փաստաբան Արամայիսը տեղյակ է, թե ինչպես է հրկիզվել «Սյունյաց երկրի» ավտոմեքենան



Արամայիս Մելքունյան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վեց դատավոր, արդեն մեկ տարի շարունակ, զբաղված են այն քաղաքացիական գործերի քննությամբ, որ հարուցել են Քաջարանի կոմբինատի ղեկավարներն՝ ընդդեմ «Սյունյաց երկրի» թերթի:

Երեկ՝ հուլիսի 16-ին, մեկնարկել է թիվ ԵԴ/12226/02/18 գործի դատաքննությունը (քննվում է կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Նարեկ Ամբարյանի հայցը):

Հայցվորի փաստաբան Արամայիս Մելքունյանն այդ նիստում գրեթե սենսացիոն հայտարարություն է արել՝ տվյալ գործին որևէ առնչություն չունեցող:

Փաստաբանը հայտարարել է, թե խմբագրության մեքենան ինքնահրկիզվել է:

Եվ այդ հայտարարությունն այն տեսանյութի ֆոնի վրա, որտեղ պարզորոշ երևում է, թե ինչպես է ոմն ենիչերի 2019 թ. փետրվարի 5-ի վաղ առավոտյան հրկիզում խմբագրության ավտոմեքենան:

Դատական նիստի ընթացքում փորձեցինք այդ կապակցությամբ ճշտող հարցեր ուղղել փաստաբանին, սակայն նախագահող դատավորը թույլ չտվեց՝ հայտարարելով, թե դա քննվող քաղաքացիական գործի հետ առնչություն չունի, թեև ընդհատել (արգելել) հայցվորի ներկայացուցչին՝ անելու նման հայտարարություն:

Հուլիսի 17-ին դիմում ենք հղել ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության քննիչին (ուն վարույթում է գտնվում մեքենան հրկիզելու առիթով հարուցված քրեական գործը)՝ միջնորդելով, որ փաստաբան Արամայիս Մելքունյանը տվյալ քրեական գործով հարցաքննվի, քանի որ նա՝ հուլիսի 16-ի հայտարարությամբ, ակնհայտորեն ցույց է տվել, որ տեղեկություններ ունի խմբագրության մեքենան հրկիզելու մասին:

Քննիչին ներկայացվել է մեկ այլ խնդրանք եւս՝ փաստաբան Արամայիսի հաղորդած տեղեկությունն իր անձնակազմ տեղեկությունն է, թե իր վստահորդ Նարեկ Ամբարյանից ստացած տեղեկությունը:

ՍՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ



Նարեկ Ամբարյան

# Էդմոն Մարուքյան. «Կարողա՞ իմանաք՝ գործադիրում ով է շահագրգռված, որ հանքերի սեփականատերերը չբացահայտվեն»



Ըստ Էդմոն Մարուքյանի ֆեյսբուքյան գրառման՝ «Հայաստանի որևէ պարտավորություն չի խախտվի, եթե հանքերի սեփականատերերը բացահայտվեն, բայց, որ հեղափոխական կառավարությունը չի ցանկանում բացահայտել, ես կարող եմ ունենալ հիմնավոր կասկած, որ կառավարության կողմից հովանավորչություն կա այս ոլորտում»:

# Կապանի օդակայանի վերագործակումը՝ ՀՀ կառավարության հոգածության ներքո



- Մեր օդանավակայանները հիմնականում վատ վիճակում են:

Այս մասին լրագրողների հետ հանդիպմանն ասաց Հայաստանի Հանրապետության քաղաքապետի կոմիտեի նախագահ Տաթևիկ Ռեազյանը (լուսանկարում):

«Գյումրին է նորմալ վիճակում, «Չվարթնոցը», «Էրեբունիում» էլ հնարավոր է քաղաքացիական օդանավ իջեցնել: Կապանի օդանավակայանը կբացվի այս տարի, մեզ այդպես են տեղեկացրել, բայց մնացած օդանավակայանները վատ վիճակում են: Մեզ ներդրումներ են պետք, որ վազբուլին հասնի այն մակարդակին, որ այնտեղ իջնելն անվտանգ լինի», - ասաց նա:

Ռեազյանը նշեց, որ հետաքրքրություն կա ներդրողների շրջանում, եւ իրենք շփվում են վերջիններիս հետ այս հարցերը կարգավորելու համար:

araratnews.am



Կապանի օդակայանի մանրակերպը

## Ցավակցություն

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը խորապես վշտացած է Նորա Ստեփանյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցություն է հայտնում Ռազմիկ եւ Գեորգ Փարսյաններին, առաջինի մոր՝ Երկրորդի տատի մահվան առիթով:

## Վաճառվում է

Երեք սենյականոց բնակարան, որը գտնվում է Կապանի Մելիք-Ստեփանյան 20 հասցեում:

Տեղեկությունների համար ցանկացողները կարող են զանգահարել 094 43 85 40 հեռախոսահամարով:

# Ռուզաննա Հարությունյանն առաջարկում է Թթի փառապոնը 2020 թ. կազմակերպել հին Կյորու հեքիաթային գյուղի մերձակայքի այգիներում

Գորիսի եւ Կապանի բիզնես-ծրագրերի 15 ներկայացուցիչ դրամաշնորհ են ստացել «ԵՄ-ն զբոսաշրջության համար. արկածային տուրիզմի զարգացում պատմական Սյունիքում» ծրագրի շրջանակում:

Ծրագրի նպատակն է՝ նպաստել Սյունիքի մարզի համայնքների կայուն զարգացմանը, հնարավորություններ ստեղծել համայնքապետների զբոսաշրջության համար:

Ծրագիրը մեկնարկել է 2018 թ. մարտ ամսին եւ իրականացվում է մի քանի ուղղություններով, այդ թվում՝ Գորիս եւ Կապան համայնքներն իրար կապող՝ խնձորենիկից հուսուտուսի ճանապարհի ուղղությամբ, ինչի համար անհրաժեշտ կլինեն 300 կմ քայլարշավային արահետի ուղեւնշում, քարտեզագրում եւ նշագրում, քայլուղուն հարակից գյուղական բնակավայրերի ավանդույթների եւ պատմությունների հավաքում:

Դրամաշնորհ ստացած 15 բիզնես-ծրագրերի ներկայացուցիչներից մեկը Ռուզաննա Հարությունյան անհատ ձեռներեցն է Հարթաշեն գյուղից:

Նրան հանդիպեցինք իր ընտանիքին պատկանող այգիներում, որ գտնվում է Կյորու (Գորու) գյուղի արեւմտյան ծորալանջին:

Դա հուլիսի 5-ին էր... Այդ օրն ընտանեկան այգուն հեքիաթական անգամ թուր թափելու արարողություն էր. բարեկամ-հարազատներից հավաքվել էին 10-15 հոգի՝ օգնելու Շահնազար Սահակյանի ընտանիքին:

Ռուզաննան մեզ պատմեց այն աշխատանքների մասին, որ կիրականացվի ծրագրի նախապատրաստության ընթացքում, որի վերջնաժամկետը 2020-ի գարունն է: Մասնավորապես, խնձորենիկից Գորիս ձգվող քայլարշավային երթուղու մի հատվածը կանցնի Կյորու, ապա եւ Հարթաշեն գյուղի տարածքով, ինչը ենթադրում է համապատասխան ենթակառուցվածքների նախապատրաստում, ինչով եւ զբաղված են հիմա: Կմաքովի Կյորու գյուղի ճանապարհը, կատարաստվեն գիշերակացի պայմաններ եւ այլն:

Արկածային տուրիզմի զարգացման համար, Ռուզաննա Հարությունյանի հավաստմամբ, կօգտագործվի նաեւ իրենց ընտանեկան այգին, որ հիմնել է իր սկեսրայրը՝ Շահնազար Սահակյանը, ում գյուղում նաեւ Սելուկ են կոչում (այդպես է նրան անվանել Գուսան Աշոտը):

Իսկ Սելուկի այգին իսկապես հեքիաթային է:

Կյորու գյուղի արեւմտյան ծորալանջի մոտ 1.5 հա ամայի հողատարածքը նա վերցրել է դեռեւս 1990-ականներին:



Շահնազար Սահակյան

Իր լուսահոգի մոր՝ տիկին Լաուրայի եւ տիկնոջ՝ Անահիտ Սահակյանի հետ ամայի այդ տարածքը բուրաստան է դարձրել:

Նախ 2.5 կմ հեռավորությունից, սեփական ուժերով, ջուր է հասցրել այդ տարածք, որից

հետո... Հիմա այնտեղ կարելի է հանդիպել մի քանի տասնյակ տեսակի պտղատու ծառերի:

- Ապրիլ ամսին տեղացած ձյունը շատ վնաս հասցրեց այգուն, - պատմում է Շահնազար Սահակյանը: Հատկապես խնձորենիների եւ տանձենիների վրա բերք չկա, բայց թուրք, խաղողը, արքայախնձորը, թուզը, զկեռը, կիվին, նուռը, պնդուկը նոր...



Ռուզաննա Հարությունյան

մալ վիճակում են, բանջարեղենն էլ վատ վիճակում չէ՝ ձմերուկից մինչեւ պոմիդոր եւ վարունգ:

Այդու տարածքում Սելուկը հիմնել է նաեւ լողավազան, ձկնաբուծարան, թռչնաբուծարան...

Իսկ այգուն կանգնեցված խաչը, որի օծումը տեղի ունեցավ օրերս, Բարձրալի հետ ժամանակ առ ժամանակ գրուցելու հնարավորություն կտա նրան:

Սելուկը նաեւ ցավ է ապրում, որ մերձակա ծորերի երեք գյուղի՝ Ուրղունիչենի, Կյորուի եւ Մաղանջուղի բերրի այգիները չեն մշակվում, մարդիկ նույնիսկ չեն հավաքում իրենց պատմական այգիների բերքը:

- Ինքներդ տեսաք, որ ծորերում մասուրի եւ մոշի առատություն է, բայց ո՞վ է հավաքողը, - իր մտահոգությունն է արտահայտում Սելուկը:

Նա մեզ հրավիրեց մասնակցելու թուր թափելու արարողությանը, եւ մենք հաճույքով մասնակցեցինք:

1955 թ. ծնված, չորս երեխայի հայր Շահնազար Սահակյանի համար հողի հետ ճիշտ աշխատելն ու մեր հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն է երկիրը հզորացնելու ամենահուսալի ճանապարհը...

Իսկ Ռուզաննան հիացած է իր կեսրայրի ու կեսուրի տարիների արարումով, որի արդյունքն այդ այգին է, որին երիտասարդները պետք է ընդօրինակեն, ինքն էլ ձգտում է բազմապատկել կեսուրի եւ կեսրայրի արածորածը:

Եվ չթաքցրեց իր մտադրությունը՝ «Այս այգին եւ այս տարածքը կոչելու ենք «Շահնազարի ամրոց»։ Դա իմ սկեսրայր Շահնազար-Սելուկը չէ, այլ գերդաստանի նախապապը, որ Շահնազար անունն է կրել»:

Ռուզաննան համոզված է, որ Կյորու գյուղի այգիները եւ մասնավորապես «Շահնազարի ամրոց» այգեստանը լավագույն եւ բարեհարմար վայրն են 2020-ին Թթի ավանդական փառապոնը հերթական անգամ կազմակերպելու համար. այդ նպատակով պատրաստվում է առաջարկություն ներկայացնել փառատոնի կազմակերպիչներին: Դա նաեւ նորություն ու թարմություն կհաղորդի ավանդական փառատոնին, ճանաչելի կդարձնի Գորիսի տարածաշրջանի այդ չքնաղ անկյունը եւս:

ՍՄՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# «Գրանդ հաուս» համալիր. ժամանցի նոր պայմաններ Կապանում

1993-ի օգոստոսի 18-ին՝ հայ-ադրբեջանական հակամարտության օրերին, հակառակորդի ռազմական կործանիչի նետած կեն տոննանոց ավիառումը Շինարարների թաղամասի N6 շենքն ապրելու համար վթարային դարձրեց. 56 ընտանիք գրկվեց ընտանեկան հարկից: Սա Կապանյան գոյամարտի ամենատխուր էջերից է: Տեսական ժամանակ կիսավեր շենքը շարունակում էր իր անհիմաստ գոյությունը: Արցախյան պատերազմի այդ տխուր հետքը վերացնել էր պետք, ինչը եւ եղավ մեկուկես տասնամյակ հետո: Այժմ դրա տեղում կառուցվել է «Գրանդ հաուս» ռեստորան-հյուրանոցային համալիրը, որ իրականություն դարձավ նույն թաղամասի բնակիչ Դավիթ Սողոմոնյանի նախաձեռնությամբ եւ ջանքերով: Նա առաջին ականատեսներից էր՝ ռմբահարության եւ շենքի մոտ հացի մեքենայի այրվելուն:

Նախ անհրաժեշտ էր հեռացնել տարածքում կուտակված շինարարական եւ կենցաղային աղբը:

Դավիթ Սողոմոնյանի փոխանցմամբ՝ չորս հինգ ամիս զբաղված էին տեղանքն աղբից «ազատագրելու» գործով: «Միայն դրանից հետո կարելի էր հաճելի միջավայր ստեղծել, իրագործել մտահղացումը, իսկ երբ 2006-ին արու զավակ ունեցա եւ Հրանտ կոչեցինք, որոշեցի՝ նոր համալիրը որդուս անունը պիտի կրի», - պատմում է Դավիթը:

2008 թվականին սկսվեցին շինմոնտաժային աշխատանքները, ասում ենք մոնտաժային, քանզի, նախեւառաջ, անհրաժեշտ էր ապամոնտաժել վթարային շենքը:

Հինգ ամիս աշխատել են ավտոկոնկրետն ու բեռնատարները: Դրանից հետո ամրացվեց ռմբահարված շենքի հիմքը, որի վրա վեր բարձրացավ եռահարկ համալիրը: Այն գործում է արդեն չորս տարի եւ ունի բար-ռեստորան, բիլիարդանոց, սաունա, շոգեբաղնիք, հյուրանոցային հարկաբաժին (ինը համար ներառելով չորս լյուքս համար):

Վերջերս համալիրում շինարարական աշխատանքներ էին ընթանում, որոնք ավարտին են հասցվել:

Ընդլայնվեցին «Գրանդ հաուս»-ի ժամանցային հնարավորությունները: Եղածին ավելացան բաց լողավազանը, ամառային խոհանոցը՝ թոնրով ու կրակարանով, բացօթյա սրճարանը եւ հանգստի սենյակները, որտեղ կարելի է նաեւ գիշերել: Գրավիչն այն է, որ եւ շինարարություն իրականացնելիս, եւ դրանից հետո զբաղվածության խնդիր է լուծվել:

Իսկ այն, ինչ ստեղծվել է, հնարավորություն է ընձեռում ամառային հանգիստը լավագույնս անցկացնելու համար: Համալիրն ունի եւս մի առավելություն. հեռու է քաղաքի աղմուկից, ունի բակային տարածք, որ հաճելիորեն ձեւավորված է:

Սրանով չեն ավարտվում համալիրի ժամանցային հնարավորությունները:

Դավիթ Սողոմոնյանն էլի պլաններ ունի, որը ներկայացրեց «Սյունյաց երկրին», բայց իրադարձություններից առաջ չընկնելու տրամաբանությամբ չենք հրապարակում փոքրինչ սպասելով դրանց իրականացմանը:

Վահրամ Օրբելյան





### Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է 2019-2020 ուս. տարվա ընդունելություն անվճար եւ վճարովի ուսուցման տեղերի համար առկա ուսուցմամբ հետեւյալ մասնագիտությունների գծով

Մասնագիտությունը	Որակավորումը	Ուսման տեւողությունը (տարի)	Ընդունելության տեղերի թիվը		1 տարվա վարձը վճարովի ուսուցման համար
			Անվճար ուսուցման	Վճարովի ուսուցման	
Դեղագործություն	Դեղագործ	2	1	9	220.000 դրամ
*Դեղագործություն	Դեղագործ	3	4	3	
Քույրական գործ	Բուժքույր, բուժեղբայր	3	1	9	220.000 դրամ
*Քույրական գործ	Բուժքույր, բուժեղբայր	4	6	4	
Բուժական կոսմետոլոգիա	Բուժքույր/կոսմետոլոգ	2	1	9	230.000 դրամ
*Բուժական կոսմետոլոգիա	Բուժքույր/կոսմետոլոգ	3	4	3	
Ատամնատեխնիկական գործ	Ատամնատեխնիկ	2	1	9	230.000 դրամ
*Ատամնատեխնիկական գործ	Ատամնատեխնիկ	3	3	2	
Բուժական մեկսուլ	Բուժքույր/բուժեղբար մերսող	2	0	10	210.000 դրամ
Մանկաբարձական գործ	Մանկաբարձ	3	0	10	220.000 դրամ
*Մանկաբարձական գործ	Մանկաբարձ	4	5	5	
*- հիմնական ընդհանուր կրթությամբ					

Մինչև 19 տարեկան հիմնական ընդհանուր կրթության հիմքով դիմորդների ընդունելությունը կազմակերպվում է միայն անվճար համակարգում:

19 տարեկանից բարձր հիմնական կրթության հիմքով վճարովի համակարգում սովորողներն առաջին տարում կվճարեն 170.000 դրամ, մնացած տարիներին համապատասխան վարձավճարների չափով:

Քոլեջ կարող են դիմել հիմնական ընդհանուր, միջնակարգ, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձինք:

Ընդունելությունն իրականացվում է քոլեջում, «Կենսաբանություն» առարկայի ընդունելության բանավոր քննության արդյունքի հիման վրա:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ս.թ. հունիսի 15-ից մինչև օգոստոսի 12-ը՝ ներառյալ շաբաթաօրեային օրերին, ժամը 9.00 – 16.00:

Ընդունելության քննություններն կանցկացվեն օգոստոսի 15-ից 17-ը:

Դիմորդը քոլեջի ընդունող հանձնաժողովին ամձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի /ծնողի, որդեգրողի կամ հոգեբարձուի/ հետ ներկայաց-

նում է

1. դիմում
2. կրթության մասին փաստաթղթի բնագիրը
3. 4 լուսանկար /3X4 սմ/
4. ամձը հաստատող փաստաթուղթ
5. ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փոստաթուղթ /առկայության դեպքում/
6. Կցագրման վկայական /գորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զին հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նմուշի կամ չգորակոչվելու հաստատող այլ նշում-

ների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից Հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում/:

Դիմորդն ընդունելության գործընթացի կազմակերպման եւ անցկացման համար քոլեջում նախապես վճարում է 1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողովին  
**Հասցեն՝ ք. Կապան, Շահումյան 37ա  
Հեռախոս 5-25-70, 094 459936**

## Կրակոցներ եւ սպանության փորձ՝ Սյունիքի մարզում

Հուլիսի 13-ին կրակոցներ են տեղի ունեցել Սյունիքի մարզում: Ժամը 19:00-ի սահմաններում Գորիսի բժշկական կենտրոնից ոստիկանության Գորիսի բաժին ահազանգ է ստացվել, որ հրազենային վնասվածքներով իրենց մոտ են տեղափոխվել 2 քաղաքացի:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հիվանդանոց են մեկնել ոստիկանության Գորիսի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Կարեն Թադևոսյանի գլխավորությամբ: Ժամանակ են նաեւ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Վրշապիտ Գեւորգյանն ու Հայաստանի քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության պետ Գոռ Մամուչյանը ու նույն վարչության Գորիսի քննչական բաժնի պետը: Ոստիկանները պարզել են, որ հիվանդանոց են տեղափոխվել խնձորենկ գյուղի բնակիչներ՝ 29-ամյա Աշոտ Ավանյանը, ով հիվանդանոց է ընդունվել «որովայնի շոշափող հրազենային վիրավորում, աջ բազկի եւ ձախ ազդրի միջանցիկ հրազենային վիրավորում» ախտորոշմամբ եւ 24-ամյա Թեոս Ավանյանը, ով հիվանդանոց է ընդունվել «աջ ազդրի կույր

հրազենային վիրավորում» ախտորոշմամբ:

Փաստի առթիվ Գորիսի քննչական բաժնում ՀՀ քր. օր-ի 34-104 հոդվածի 1-ին մասի եւ 235 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Ոստիկանությունն ու քննչական բաժինը ձեռնարկում են անհրաժեշտ օպերատիվ հետախուզական եւ քննչական համատեղ գործողություններ՝ դեպքի հանգամանքները պարզելու, կատարողին կամ կատարողներին հայտնաբերելու ուղղությամբ:

Վիրավոր Ա. եւ Թ. Ավանյանները եղբայրներ են: Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին եւ քննիչներին հայտնել են, որ վիրավորներն ի վիճակի չեն կատարվածի մասին տեղեկություններ տալու:

**Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:**

## Քոլեջների եւ ուսումնարանների դիմորդների փաստաթղթերի ընդունման ժամկետները փոփոխվել են

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի հրամանով փոփոխություն է կատարվել նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին-մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգում: Մասնավորապես, փոխվել են ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2012թ. ապրիլի 5-ի N 254-Ն հրամանով հաստատված ընդունելության ժամկետները:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից, սահմանվել է, որ առկա (ստացիոնար) ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի փաստաթղթերն ընդունվում են ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 17-ը (ոլորտային մասնագիտություններով՝ հաստատության սահմանած ընդունելության քննության օրվանից 2 օր առաջ, բայց ոչ ուշ, քան օգոստոսի 15-ը),

իսկ հեռակա ուսուցման համար՝ մինչև նոյեմբերի 25-ը:

«Թափուր տեղերի առկայության դեպքում մրցութային հիմունքով կարող է ընդունվել ընթացիկ տարում այլ մասնագիտական ուսումնական հաստատություն մրցույթով չանցած այն դիմորդը, ով մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 22-ը ներառյալ կներկայացնի պահանջվող փաստաթղթերը, իսկ ոլորտային մասնագիտություններով դիմորդները նաեւ տվյալ տարվա համար հանձնած քննության գնահատականի վերաբերյալ տեղեկանքը:

Ընդունելության մրցույթի վերջնական արդյունքների հրապարակումից հետո մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 25-ը ներառյալ ուսումնական հաստատությունը լիազորված մարմին է ներկայացնում ընդունելության արդյունքների վերաբերյալ հաշվետվություն»,- նշված է հարողդագրության մեջ:

## Սոփ եղցու բակում է թաղված Պապմահայր Խորենացին

էջ 1  
Հանուն ճշմարտության պետք է նշել, որ, մեկ այլ առավել տարածված վարկածի համաձայն, Սոփսե Խորենացին թաղվել է Տարոնի Առաքելոց վանքի արեւելյան պատի տակ: Եվ անգամ մեծ հայագետ Մորուս Հարաթյանը՝ «Ո՞րն է Սոփսե Խորենացու ծննդավայրը» հայտնի հոդվածում, հրաժարվում է վիճարկել ժողովրդական ավանդույթը՝ Պատմահոր գերեզմանի վերաբերյալ (նկատի ունենք Առաքելոց վանքի բակում թաղված լի-

նելու տեսակետը):  
Ու, այդ բոլորով հանդերձ, ոչ ոք իրավունք չունի կասկածի տակ առնել ժողովրդական մեկ այլ ավանդություն, որի համաձայն Խորենացին թաղվել է իր իսկ հիմնած Սոփ եղցու բակում՝ իր ծննդավայր Խորեն-Խորիսի-Խորով գյուղի մերձակայքի ճգնաբանում:  
Այդ վարկածը հիմնավորելու համար ավելի ուշ ընթերցողին կներկայացնենք այլ կռվաններ եւ՝ գրավոր աղբյուրներից, իսկ առայժմ

բավարարվենք ասվածով:  
Եվ ուրեմն՝ ըստ ժողովրդական հիշողության՝ հենց այդտեղ՝ Սոփ եղցու բակում է հողին հանձնվել Պատմահայր Սոփսե Խորենացին:  
Ի դեպ, մենք Պատմահոր ենթադրյալ գերեզմանից այցելեցինք ոչ միայն եկեղեցուն ծանոթանալու նպատակով, այլ խորենացիաշունչ այդ սրբավայրից (մեր նոր նախածեռնությունից առաջ) ոգի առնելու համար:

Հ.Գ.  
«Սյունյաց երկիր» ստեղծագործական խմբին ուղեկցում էր Տեղ գյուղի N1 միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Ալեքսան Ծեգունցը, ում մեր երախտագիտությունն ենք հայտնում:  
Սամվել Ալեքսանյան  
Լուսանկարը՝ Սոնա Արզումանյանի

# Մի քիչ հպարտ լինենք...



**Սերյոժա Գասպարյան**  
**ՀՀ լրագրողների միության**  
**անդամ**

2016 թվականի ապրիլ ամսվա սկզբի չորսօրյա բախումներից հետո նորից հնչեցնում ենք ցեղասպանություն արտահայտությունը, որ իբրև աղբյուրական բանալի գործողությունները թալիշում ու Մատաղիսում նման են ցեղասպանության:

Այն ժողովուրդը, այն սիրելիներս, ի՞նչ ցեղասպանություն, կռիվ է...

Ժամանակին անտերության մատնված երկիրն աշխարհի ուժեղները բաժանեցին նոր ստեղծված պետությունների միջև (Թուրքիա, Ադրբեջան), մնացածն էլ մկեր մնացին շրջապատող տերությունների (Պարսկաստան, Վրաստան):

Արդեն հարյուր տարի է՝ սուգ ու չիվանով շրջում ենք աշխարհով մեկ ու հայտարարում, որ մեզ ցեղասպանության ենթարկեցին, բայց լսողն ո՞վ է կամ դրանից ի՞նչ օգուտ այսօր:

Երկրում այն է, որ կարողացանք Ղարաբաղն ազատագրել, եւ այսօր էլ հեշտությամբ թուրքն ուզում է իրեն ընծայվածը հետ վերցնել, մենք էլ չենք տալիս, կռիվ է... Չոհվում են զինվորներ ու խաղաղ բնակիչները. կա փաստ, որ թշնամին իր ցանկությունները կատարելու համար կիրառում է մարդու կողմից ստեղծված լավագույն տեսակի զենքերը՝ հակառակորդին ոչնչացնելու համար:

Փառք մեր բանակին, որ կարողացավ հետ շարտել թշնամուն:

Նվճարվել փոխարեն պետք է ոչնչացնենք վերը նշված երկու բնակավայրի դիմաց գտնվող Թոփկարակոյունլու և Նավթալան բնակավայրերը, որոնց համար մեր փոխարեն հիմա նրանք, ծայրերը գլուխները գցած, սրա-նրա դուռը թակելով կվճատային, թե մեզ կոտորեցին, ինչպես Ղարաբաղյան պատերազմի ժամանակ արվեց Խոջալուում, որից մինչև այսօր էլ ծայրերը չեն կտրում:

Ուժեղին չեն դատում...

Եթե այդպես լինեի հիտլերյան Գերմանիան երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ

ամբողջ Եվրոպան սրի ու հրի չէր մատնի...

Իսկ այդ երկրների ժողովուրդները պետք է անընդհատ բարձրաձայնեին, որ իրենց ցեղասպանության են ենթարկել, սակայն պատերազմն ավարտվելուց Գերմանիայի նկատմամբ որոշ պատժամիջոցներից հետո, բոլոր երկրները սկսեցին մտածել իրենց երկրի տնտեսությունը վերականգնելու եւ զարգացնելու ուղղությամբ:

Պահեր են լինում, որ ես հայերին ցեղասպանության ենթարկելու համար մեղադրում եմ միայն ու միայն մեզ՝ հայերիս:

Տասնհինգերորդ դարում եվրոպական երկրների մեծ մասը սկսեց գաղութատիրություն քաղաքակրթություն վարել, այդ ընթացքում շատ ժողովուրդներ կոտորվեցին, շատերն էլ, կարելի է ասել, իսպառ բնաջնջվեցին: Հատկապես փաստ է, որ Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների հայտնաբերումից հետո ոչնչացվեցին բնիկ ժողովուրդները՝ իրենց բարձր քաղաքակրթություններով հանդերձ՝ ացտեկներ, մայաներ... Արդեն անցել է մոտ հինգ հարյուր տարի, ո՞վ է ասում, որ ԱՄՆ պետության հիմնադիրները ցեղասպանության ենթարկեցին ամերիկյան հնդկացիներին:

Ուժեղին չեն դատում...

Տասնմեկերորդ դարասկզբում մերձվոլգյան եւ մերձարալյան շրջանների թուրք- սելջուկյան ցեղերը բազմացել էին՝ իրենց ոչխարներով հանդերձ, եւ սկսեցին արշավել դեպի Փոքր Ասիա՝ Հայաստանի վրա:

Արեւելքում էլ մոնղոլ-թաթարական ցեղերն էին հարձակվում հարեան Չինաստանի վրա: Չին մեծ ժողովրդի դիմադրությանը հանդիպելով՝ նրանք սկսեցին նոր ուղիներ փնտրել: Հատկապես Չինգիզ խանի բազմաթիվ ասպատակությունները Չինաստանի վրա անհաջողության մատնվեցին, որը պայմանավորված էր նաեւ Չինական մեծ պարսպի կառուցումով:

Տեսնելով, որ հնարավոր չէ չինացիներին հաղթել, մոնղոլական հորդաներն ուղղություն վերցրեցին դեպի արեւմուտք: Միջին Ասիայով եւ հարավկասպիական տարածաշրջաններով շարժվելով դեպի Փոքր Ասիա, Ռուսաստան, ճանապարհին հանդիպած ամեն ինչ տրորում եւ ոչնչացնում էին: Նվաճված տարածքներով անցնելուց լավ եւ հարմարավետ բնակավայրերում թողնում էին ցեղախմբի անդամներին՝ իրենց ոչխարների հետ: Այն տարածքներում, որտեղ հանդիպում էին լուրջ դիմադրության, նրանք չէին մնում, հեռանում էին: Մոնղոլիա-Փոքր Ասիա ճանապարհին նրանք շրջանցեցին պարսիկների երկիրը եւ շարժվեցին դեպի Փոքր Ասիա, ճանապարհին հանդիպեցին Հա-

յաստան պետությանն ու հայերին, որոնք ունեին պետություն եւ պետականություն՝ Բագրատունիների թագավորություն ծաղկող Անի մայրաքաղաքով:

Թուրանական ցեղերի Կովկաս հասնելու ժամանակ իր հզորության գագաթնակետին էր Բյուզանդական կայսրությունը՝ Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով: Փոխանակ միավորվեին եւ հետ շարտեին թափառական ցեղերին, կատարեցին հակառակը, սկսեցին իրար դեմ կռիվները, թուլացան, բզկտվեցին, եւ հայկական թագավորությունը թուլացավ ու դադարեց գոյություն ունենալ:

Այդ պայմաններում էր, որ հայոց իշխանները, իրենց երկիրը թողնելով, հեռացան ու 1030 թվականին ստեղծեցին Կիլիկյան պետությունը, որ գոյատևեց երեք հարյուր տարի:

Այս առիթով միշտ մտորել եմ ու կատարել համեմատություն, չին ժողովուրդը դիմադրեց՝ կառուցելով պարսպ՝ փակեց թաթարական արշավանքների դեմը, նրանք էլ, այլ ելք չգտնելով, ուղղություն վերցրեցին դեպի արեւմուտք: Հայերն էլ հակառակն արեցին՝ թուրքերի գալուց հետո թողեցին իրենց երկիրն ու հեռացան Միջերկրականի ափերը՝ նոր պետություն հիմնելու: Նոր պետության հիմնումից 300 տարի անց արաբական մամլուկների ու թուրքերի նոր ձեւավորված ու տարեցտարի հզորացող պետության կողմից կործանվեց Կիլիկյան թագավորությունը:

Ուզում եմ այդ թեմայով ինձ միշտ տանջած հիմնահարցի համեմատությունը բարձրաձայնել. չին ժողովուրդը, կառուցելով Մեծ պարսպը, այսօր մոտ 1.5 միլիարդ բնակչություն ունի, իսկ իր երկիրը բնածնունդ թուրքին հանձնած եւ կարճաժամկետ կյանքով նոր Կիլիկյան պետություն հիմնած հայերն ամբողջ աշխարհով ցրված, մոտ 10 մլն են:

Թուրքական արդեն ձեւավորված պետության հզորացումը հասցրեց նրան, որ Օսմանի առաջնորդությամբ հիմնված պետությունը դարձավ կայսրություն, 1453 թվականի երբեմնի հզոր Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս անկումից հետո թուրքերը թափանցեցին Եվրոպա եւ նվաճեցին պետությունների մի մասը:

Ուզում եմ պատմական մասը թողնել պատմաբաններին եւ բերել բնության մեջ գոյություն ունեցող օրինակներից մեկը. դա կկլի օրինակն է: Գարնանը կկուն բազմացման ժամանակ չի ունենում իր սեփական բույսը, ծու է ածում ուրիշի բնույթ կլինի աղավաղ, ճնճղուկ, թե՛ մեկ այլ թռչուն: Կկուն ծու ածելով ուրիշի բնույթ բնատեր թռչունն իր ձագերի հետ մտնում է հանուն կկլի ձվից: Մայր թռչունի հանած ճտերից՝ կկլի ճուտը, լինելով ուժեղ

սեփականատիրոջ ճտերից, մոր բեռած կերն ինքն է ուտում ու մի քանի օրից, տեղի նեղության պատճառով, իրեն թափահարելով, բնից դուրս է գցում այդ թռչունի սեփական ձագերին՝ բնում մնալով մենակ:

Այդպես է օրենքը բնության ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր...

Օսմանյան կայսրության հզորացման ժամանակ արդեն իրենցը համարվող Արեւմտյան Հայաստանի տարածքը ներ էր իրենց համար:

Ելնելով բազմաթիվ հանգամանքներից՝ իրենց «բույնը» պետք է ազատեին, որի խանգարողը հայերն էին: Եվ նրանք դիմեցին բնիկներ համարվող հայերին ոչնչացնելու մեթոդին, որն ավարտվեց ցեղասպանությամբ:

Արդեն հարյուր տարի է մեր շուրթերից չի իջնում ցեղասպանություն արտահայտությունը. դեռ ավելին այսօր էլ նոր անուններով է հնչեցվում՝ Մարաղայի ցեղասպանություն, Բաքվի, Սոււզայիթի, եւ անենաթարմն ուզում ենք ասել՝ Մատաղիսի եւ Թալիշի... Թուրքերի հարձակումից զոհվածներին անվանում ենք ցեղասպանվածներ...

Ում խելքին ինչ փշում, այնպես էլ անվանում ու հնչեցնում է:

Ուզում եմ ասել՝ բավական է, եկեք ցեղասպանված արտահայտության բարդության ձեռքազատվեք, ազատվեք ու ասենք, որ համուն հայրենիքի ազատագրման ու պաշտպանության համար զոհվեցին զինվորներ եւ խաղաղ բնակիչներ:

Պետություն եւ պետականություն կորցնելուց հետո՝ ութ-ինը հարյուր տարվա ընթացքում, հարցնում եմ հայերը ե՞րբ են գեղք վերցրել, որ կռվեն իրենց ազատության ու երկրի ազատագրման համար, այն դեպքում, որ, կոպիտ ասեն, ամբողջ աշխարհի գաղութացված երկրները պայքարեցին ու ազատագրվեցին Եվրոպական երկրների գաղութացումից: Հնդկները, աֆրիկյան երկրների ժողովուրդները, Ամերիկայի ժողովուրդները զենքով կռվում էին գաղութարարների դեմ իրենց եւ երկրի ազատության համար: Հայերն այդ ժամանակ թակում էին գաղութարար պետությունների դռները, որ գան իրենց ազատագրեն գաղութացնող թուրքերից: Այստեղ հարկ է ասել ժողովրդական խոսքը՝ «Շունը չան թաքը չի ծամի»:

Այսօր էլ աչքներս տնկել ենք ԱՄՆ-ի եւ մյուս մեծ տերությունների ղեկավարների բերանին. արդյո՞ք ապրիլի 24-ին կհնչի ցեղասպանություն բառը, թե՛ ոչ, այն դեպքում, որ նույն ԱՄՆ կղզվածն առաջին երկիրն էր, որ բնիկներին հինգ հարյուր տարի առաջ ցեղասպանության ենթարկեց:

Թուրքական 900-ամյա տիրապետության ընթացքում թուրքերը (ըստ պատմաբան Ուլուբաբյանի՝ թուրքերը Հայաստան են թափանցել 1020 թվականին, որը Հովհաննես Կողբեցիի չարագուշակությունն է) չեն հանդիպել կազմակերպված

ապստամբության, բացի Խանասորի կռվից, որը 1897 թվականին կազմակերպեցին եւ ոչնչացրին քրդական մագրիկ ցեղախմբին:

Չեթունի, Սատունի, Վանի եւ ուրիշ տարերային բռնկումները չեն ընդունում, դրանք այդ երկարամյա բռնության ժամանակ չեն բաներ էին:

Հաճախ եմ հարց տալիս ինքս ինձ, թե ի՞նչն է պատճառը, որ հայերի մեջ ոգին այդքան մեռած էր, որ չէին շարժվում նույնիսկ այն պահին, որ թուրքերը որոշեցին լուր ու հնազանդ ժողովրդին, իրենց պահած կենդանիների նման, մորթել:

Ինչպես չզայրանալ, որ մտավորականներից ամենախելոքն ու բարձր դիրք ունեցողը, որը 20-րդ դարասկզբի թուրքական Մեջլիսի անդամ էր, նույնիսկ աքսորի ճանապարհին չէր հավատում, որ իրեն տանում են սպանելու: Չոհրապի խելքի տեր մարդու ժողովրդին կմորթեին, բա ի՞նչ կանեին...

Դեռ լավ է, որ Արամ Մանուկյան ունեինք, եւ 1918 թվականի մայիսյան կռիվը ղեկավարեց ու թուրքերին ջախջախեցինք Սարդասապատում:

Թուրքերի առաջարկած հաշտության պայմանագիր կնքելու համար հանդիպման ժամանակ Արամ Մանուկյանն ու թուրքական իրամամատար Խալիլ փաշան գրկախառնվել էին:

Այսօր աշխարհն ուրիշ կերպ է ապրում...

Հոլոքոստի ենթարկված հրեաները, որ մի թիվ հող չունեին ու չէին, հիմա ունեն պետություն, պետականություն եւ միշտ չեն կրկնում, թե տալիս մեր դեմ կռվելու: Մենք էլ՝ փոխարեն ստեղծենք մեր զենքը, անընդհատ բարձրաձայնում ենք, թե ինչն է նման գեղք տալիս: Լավ են անում, պետք է մենք էլ համարժեք զենք ստեղծենք, որ կռվենք արդեւանցիների դեմ, ազատագրված տարածքները պաշտպանենք ու, դեռ ավելին, դառնանք եւ թուրքերին ընծայված Նախիջեւանից էլ նրանց մաքրենք ու Արեւմտյան Հայաստանի կորցրած տարածքներն էլ վերադարձնենք:

Վերջին հազար տարվա ընթացքում, մեր երբեմնի հզոր հայրենիքից (որը կազմում էր մոտ 400 հազար քառակուսի կմ), այսօր թուրքերից մաքրված 35 հազար քառակուսի կմ-ը պետք է այնպես հզորացնենք, որ բոլոր մեծ տերությունները մեզ հետ հաշվի նստեն:

Որպես պատերազմում հաղթանակած երկիր՝ չմոռանանք մեր անմեղ նահատակների անմար հիշատակը եւ վերջ դնենք նվաճողներին ու մի քիչ էլ հպարտ լինենք:

Ուժն է ծնում իրավունք...

## Կվերանորոգվի Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնը

Գործադիր փոփոխություններ է կատարել «ՀՀ 2019 թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում եւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը ՀՀ 2019 թ. պետական բյուջեի հարկային եկամուտներից հատկացրել 690 մլն 688.3 հազար դրամ:

Գումարը նախատեսվում է ուղղել 6 մշակութային կազմակերպությունների՝ Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկա-

կան թատրոնի, Գորիսի Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատրոնի, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ Ա. Սարգսյան եւ Հ. Կոջոյան տուն-թանգարանի, Հ. Թումանյանի թանգարանի շենքային պայմանների բարելավմանը, Պատմամշակութային արգելոց-թանգարան-

ների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայության «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում «Բաղնիք» եւ «Խճանկար» հուշարձանների նորոգմանը եւ ամրակայմանը, ինչպես նաեւ հուշարձանախմբերի կամ առանձին զբոսաշրջային գրավչության տարածքներում ՉՐ կողմից բազմալեզու ցուցանակների տեղադրմանը:

Որոշման նպատակը 6 մշակութային կազմակերպությունների՝ թանգարանների եւ թատրոնների բնականոն գործունեության ապահովումն է, ինչպես նաեւ հանրապետության հուշարձանների պահպանման, օգտագործման, հանրահռչակման եւ զբոսաշրջային գրավչության բարձրացումը:

# Սյունյաց աշխարհը խնկարկեց Վարդան Մամիկոնյանի հիշատակը



Հուլիս ամսվա երրորդ կիրակի օրը Սյունիքում խնկարկում են Սուրբ Վարդան Մամիկոնյանի հիշատակը:

Եվ այդպես՝ դարեր շարունակ... Իսկ պաշտամունքի եւ խնկարկումի վայրը Սուրբ Վարդան Ջորավարի (Ջորավոր) եկեղեցին է, որ գտնվում է Աճաղակոթից արեւելք Շաղատի ճանապարհի եզրին՝ ժայռագոտու ստորոտում:

Եկեղեցու հարավային պատի տակ է գտնվում Ավարայրի Ջորավարի եմբարդյալ գերեզմանը:

Ըստ Մորուս Հասարթյանի՝ «...իրոք Վարդանի եւ զուցե մի քանի զոհված իշխանների դիակները Շաղատ են բերել եւ երկրի տիրոջը՝ Վասակին հանձնվել»:

Վասակը մինչեւ Տիգրան ուղեւորվելը մնացել էր Սյունիքում:

Այդ ընթացքում էլ, ըստ Մորուս Հասարթյանի, Վասակը հասցրել է այնտեղ կանգնեցնել Վարդանի հոյակապ հուշարձանը:

Վայրը, որտեղ հողին է հանձնվել Վարդան Ջորավարը, գտնվում էր Նախիջեան տանող Սյունիքի զխավոր ճանապարհի եզրին:

Այդ վայրը, Ավարայրից առաջ էլ՝ դարեր շարունակ, ուխտավայր է եղել, պաշտվել է ժայռից բխող Կաթնաղբյուրը կամ Սուրբ աղբյուրը, որ 20-րդ դարասկզբին վերացվեց:

Ուշագրավ է, որ սյունեցիներն այդ սրբավայր են գալիս ոչ միայն հուլիսի երրորդ կիրակի՝ Վարդանի հիշատակի օրը, այլեւ Վարդանի ուխտի օրը (փետրվարին):

... 2019 թ. հուլիսի 21-ին, Վարդավառից մեկ շաբաթ առաջ, հարյուրավոր սյունեցիներ, սովորության համաձայն, այցելեցին Սուրբ Վարդան Ջորավոր խոնարհվելու նրա հիշատակի առջեւ:

Առավոտվանից մինչեւ օրվա վերջ չէր դադարում մարդկանց հոսքը:

Մարդիկ գալիս էին եւ՛ աղոթելու, եւ՛ մոմ վառելու, եւ՛ սրբավայրի քարերին հավելու ու այդ ամենին հաղորդվելու, եւ՛ մատաղ անելու համար:

Գալիս էին ընտանիքով, ընկերներով, հարազատներով, մեծով ու փոքրով:

Գալիս էին հանրապետության տարբեր բնակավայրերից...

Սուրբ Վարդանի հիշատակի օրը եւս մեկ անգամ բարձրաձայնեց՝ **հիշատակն արդարոց օրհնությամբ եղից**:

Թող Սուրբ Վարդանի բարեխոսությամբ հայոց տանը համերաշխություն տիրի, նահանջի ատելությունը, որ այսօր թեւածում է մեզանում:

Թող հայոց աշխարհում իշխեն խաղաղությունը եւ արարումը:

Թող հայոց բանակն այսուհետ եւս արժանապատվորեն պաշտպանի Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության սահմանները:

## Երկամյա ընդմիջումից հետո անցկացվեց «Միսս եւ միստր Կապան» մրցույթ-փառատոնը

Երկամյա ընդմիջումից հետո տասներեքերորդ անգամ անցկացվեց գեղեցկության, նորաձեւության, տաղանդի «Միսս եւ միստր Կապան-2019» մրցույթ-փառատոնը, որ միշտ էլ աշխուժություն եւ ոգեւորություն է առաջացնում փոքրիկ գեղեցիկ-գեղեցկուհիների եւ նրանց ծնողների շրջանում:

Հուլիսի 11-ին Կապանի մշակույթի կենտրոնի բեմահարթակում կրկին մանուկների շքահանդես էր:

Մինչ մրցույթը սկսելը ցուցադրվեց տեսաֆիլմ, որն ամփոփում էր փառատոն-մրցույթի անցած 13-ամյա ուղին: Իսկ այն տեղեկացնում էր, որ «Միսս եւ միստր Կապան» ոչ միայն դարձավ ավանդական, այլեւ ընդլայնեց իր աշխարհագրությունը, իր պատվիրակներն ունեցավ հանրապետական մասնատիպ մրցույթ-փառատոններում:

«Միսս եւ միստր» փառատոն-մրցույթի մարզը ներկայացնող տարբեր տարիքի երեխաները մասնակցել են հանրապետական մրցույթների եւ եզրափակիչ «Գալլա» համերգների՝ շահելով «Միսս Հայաստան», «Միստր Հայաստան», «Վիցե միսս Հայաստան» մրցանակները:

Միջազգային արեւնայում էլ մրցանակներ նվաճելը չուշացավ,

որով կապանցի մանուկները ոչ միայն բարձր պահեցին Կապանի, այլեւ հանրապետության պատիվը:

Այս անգամ փոքրիկները մրցեցին տարիքային երեք խմբով. նախ հանդես գալով գեղաքայլով (դեֆիլե), այնուհետեւ ներկայացնելով ազատ ոճի պարեր, իսկ վերջում ցուցադրեցին դասական ոճը եւ դասական պարը:

Ի վերջո մրցույթ-փառատոնը պատեհ առիթ էր գեղեցիկի հետ հաղորդակցվելու, մանկության հեքիաթի հրաշք զգացողությունը վերապրելու առումով, ինչն արտահայտվում է թե՛ փոքրիկների ելույթներով, թե՛ հանդիսատեսների ոգեւորիչ բացակայություններով: Իսկ վերջում մրցույթ-փառատոնի հանձնախումբն ամփոփեց արդյունքները: Բոլոր մասնակիցներին հանձնեցին ինչպես զխավոր, այնպես էլ տարբեր անվանակարգերում սահմանված մրցանակներ: Անցկացվեց նաեւ «Հանդիսատեսի համակրանք» մրցանակի խաղարկությունը:

«Միսս եւ միստր» մրցույթի միջազգային կազմակերպիչի Սյունիքի մարզի ներկայացուցիչ Նոնա Գալստյանը, ում ջանքերի, նվիրումի շնորհիվ փառատոնը շարունակում է ընթացքը, ողջունի խոսքում նախեւառաջ երախտագիտություն հայտնեց



Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանին, ում բարի կամեցողությամբ եւ հովանավորությամբ կապանցի տարբեր անվանակարգերում սահմանված մրցանակներ: Անցկացվեց նաեւ «Հանդիսատեսի համակրանք» մրցանակի խաղարկությունը:

«Միսս եւ միստր» մրցույթի միջազգային կազմակերպիչի Սյունիքի մարզի ներկայացուցիչ Նոնա Գալստյանը, ում ջանքերի, նվիրումի շնորհիվ փառատոնը շարունակում է ընթացքը, ողջունի խոսքում նախեւառաջ երախտագիտություն հայտնեց

րաքաղաքի «Վալենտինա» համալիրում, իսկ միջազգային՝ տեղի կուրորդառն աշխարհը թուրքի Բոդրում քաղաքում, եւ համոզմունք հայտնեց, որ այդ ստուգատեսներում մասնակիցներ կուրենա նաեւ Կապանը:

Դե իսկ այս անգամվա մրցույթ-փառատոնը, ինչպես միշտ, ավարտվեց տոնական հրավառությամբ եւ ջերմ հավորանքներով, ինչպես նաեւ ավանդական տորթի համտեսով:

**Վահրամ Օրբելյան**

## Այս տարի Վարդավառը նշվելու է հուլիսի 28-ին

Այս տարի ամենասպասված տոներից մեկը՝ Վարդավառը, հուլիսի 28-ին է: Եկեղեցին այս օրը նշում է որպես Այլակերպության տոն:

Սա շարժական տոն է եւ նշվում է Ջատիկից 98 օր հետո: Տոնը, սակայն, բնապաշտական ժամանակներից է եւ թերեւս հայերի ամենասիրելի տոնն է եղել: Հայաստանի որոշ մարզերում (Լոռի, Տավուշ) Վարդավառն անշարժ տոնարով են նշում՝ հուլիսի վերջին կիրակի օրը:

Վարդավառը ջրի տոն է եւ այդ օրը բոլորը խրախճանքից, երգ ու պարից բացի, նաեւ ջրում են միմյանց: Եկեղեցին սա բացատրում է նրանով, որ երբ Նոյն Արարատից իջել է Նախիջեան, որպեսզի իր ժառանգների մեջ անմահ պահի ջրեղեղի մասին հիշատա-

կը, կարգադրել է, որ ամեն տարի այս օրը ջրեն միմյանց: Ամեն դեպքում, մարդիկ Վարդավառին ուխտ են գնացել սարերը, ուր գետերի, աղբյուրների ակունքներն են: Հենց ջրի ակունքների մոտ էլ Վարդավառի տոնախմբություններն են կատարվել, զոհաբերություն արել, խաղեր ու խրախճանք կազմակերպել:

Ամենատարածված խաղը կոխն էր, որ հավանաբար նվիրված էր Վահագն Աստուծուն: Վահագին էին նվիրված նաեւ վանքի երիտասարդների կազմակերպած ռազմական խաղերը Վարդավառի տոնին, երբ խմբերի բաժանված, պարսատիկներով ու փայտեղով «կռվում» էին միմյանց դեմ: Շատ տարածված էին աղջիկների զանազան երգ-խաղերը, զվարճախաղերը:

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 3 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՅԱՄԱԼԻ» ՊՈԱԿ-Ը ԿԱՏԱՐՈՒՄ Է 2019-2020 ՈՒՄ. ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նախնական մասնագիտական փաստաթղթի բնագիրը 3. 4 լուսանար (3x4 չափսի) 4. Անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր, մինչեւ 16 տարեկան դիմորդը՝ ծննդյան վկայական 5. Տեղեկանք բնակավայրից Դիմումները ներկայացնել կրթահամալիրի ընդունող հանձնաժողովին մինչեւ 2019 թ. օգոստոսի 17-ը, մրցույթը կանցկացվի օգոստոսի 19-ին:

Դասերը կսկսվեն սեպտեմբերի 1-ից:

ՀԱՍՑԵ՝ Սյունիքի մարզ, Ք. Կապան, Սպանդարյան փողոց, շենք 4

Հեռոնախոսակցություն՝ 2-34-29, 2-84-66

**ՏՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆ**

Ֆրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶՂ - ԾԱՆՈՒՄՈՒՄ» բաժնույն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

ՊՐ կոդ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրանակ՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.07.2019թ.:

## Սյունյաց երկիր

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՐՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴՈՍՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

Ել. փոստ՝ Ել. կայք՝

Ռոթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: